



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՒԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆ

ԶՄԻՌՆԵՒԱՅ ԾԱԲԱԹ Գ ՅՈՒԼԻՍ 1877

ԹԻՒ 1070

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օսմանեան կայսերական զօրաց յաջողութիւնն իրենց մէջ՝ կըշարունակէ և թշնամին մեծամեծ թուարութեանց և փնտռուց հանգիստելով՝ խուսափելէն համարեցաւ յետախաղաց ընթացք մի բռնել։ Լոնտոնի Տէլի Թէլէգրաֆ օրագրոյն թղթակիցն՝ հետեւեալ տեղեկութիւնն երն կրէր իրողութիւնն . « Հաղորդակցութիւնքն վերա-հաստատուեցան կարսի հետ . Լորիս Մեյիքօֆ զօրացեան թողաւաւ իւր յառաջացեալ դիրքէն՝ զինի 4000 մարդ կորուսանելոյ Զինի տակ : Օսմանեան զօրքն կը յառաջանան ի վերայ կարսի . իսկ Ֆաշիլ փաշա դէպի Պայազիտ յառաջ կը խաղայ : Ռուսերն յետ կոյս կը բարձրն ի վերայ բոլոր գծին , և թող տուին Սօլանլը-Յաղին բարձունքը : Կարսի պաշարումն արձա-կեցաւ զինի յուսահատ յարձակման միայ ընդ-դէմ թահմաղ անուանեալ ամրոցին , ուր Ռուս-աց զօրքն ահապին կորուսաներ ըրին : Մուք-թար փաշան կը յառաջանայ » :

Փարիզի ՄՕՆԻԹԵՐԻ ԻՆԵՎԷՐՍՏԷԼ օրագիրն և կըսէ թէ Ռուսաց զօրաբանակն Գանուբի անդի կողմն՝ ըստ ամենայն երեւմանց՝ ծանր ընդդիմութեանց կը պատահի : Պիէլլայի մէջ՝ (որ Պիւկարիոյ վաւրիկ գիւղ մըն է) տեղի ունեցած իրեն կերելի թէ կարծուածէն աւելի ծանրա-կտութիւն ունեցաւ . քանզի օսմանեան զօրքն նպատաւորեալ ի հզօր գրից իւրեանց , հաւա-ծեցին զթշնամին՝ որ կը յարձակէր իրենց դէմ , և պարտաւորեցին զնա ետ դառնալ : Պիէլլայի պատերազմին մէջ օսմանցիք 400 գերի բռնե-ցին , որք յուղարկեցան ի Եւֆրատ :

Անգղիական նաւատորմին ի Պէշիքա հասա-նէն՝ չունի ամենեւին զնշանաւոր ծանրակշու-թիւնն զոր ի սկզբան տալ ուզեցին . քաղաքա-գէտ անձինք ոմանք . իսկ եկամտից տեսուչ սըր Լորթքօք . պաշտօնապէս յայտնեց երեսփոխա-

նական ժողովոյն մէջ թէ անգղիական նաւա-տորմին ի Պէշիքա երթալուն պատճառն ուրիշ բան չէ , բայց միայն վասնզի այն տեղն՝ Լոնտոնի և Կ. Պօլսոյ մէջ կեդրոնական կայարան մի է . և յաւելցոյց թէ Անգղիան ամենեւին դիտաւորու-թիւն չունի զԿ. Պօլսի գրաւել , և ոչ իւր մտքէն կանցնի սպառնալ որ և է տէրութեան մը , այլ պիտի շարունակէ հաստատուն պահել զէջը-թութիւն իւր : Այսու ամենայնիւ կերի թէ Անգղիան ինդրեց որ իւր նաւատորմին մօտէ ի մայրաքաղաքն օսմանեան կայսերութեան , բայց Բարձրագոյն Դուռն մերժեց :

Յանցելումն զրոյց մի տարածեցաւ թէ Անգ-ղիոյ և Գաղղիոյ կառավարութեանց մէջ համա-ձայնութիւն մի հաստատուեալ է , որպէսզի ծո-վու վերայ միարան գործակցութեամբ վարուին ի պահանջել պարագայից յԱրեւել : Սըր Նորթ-քօք այս զրոյցին անհիմն լինելն յայտնեց հա-սարակաց խորհրդարանին մէջ :

Նմանապէս անհիմն է՝ գաղղիական նաւատոր-մին ի Պէշիքա հասանելն , զոր քաղաքիս միւս-լրագրաց հետ՝ մեք ևս հրատարակեցինք ԱՐ-ՇԱԼՈՒՍՈՅ նախքնից թուոյն մէջ :

Ըստ հեռագրական տեղեկութեանց՝ յուղար-կելոց ի վէճնայէն ի Փարիզ , Անգղիական նա-ւատորմին ի Պէշիքա երթալուն նպատակն՝ պաշտպանել է ի պահանջել հարկին զօգուտն անգղիական և զքրիստոնեայս Արեւելից : Այս բացատրութիւնն տրուեցաւ յանգղիական դես-պանաց՝ գտանելոց առ օտար տէրութիւնս : Ըստ դիտողութեան Փարիզի ԼԷ ԴԱՆ օրագրոյն , անգղիական նաւատորմին ոչ թէ վասն ներկայ վտանգի մը գնաց ի Պէշիքա , (քանզի ոչ Արեւե-լից քրիստոնեայք վտանգի մէջ կը գտնուին տա-կաւին և ոչ անգղիական օգտից ծանր սպառնա-լիք կը լինին այժմ) այլ վասն սպառնալ պատա-հական խառնակութեանց : Պրուքսէի մէջ հրա-տարակեալ ԼԷ ՆՈՐ անուն օրագիրն ևս կըսէ թէ՝ անգղիական նաւատորմին առաջին ան-

գամ ի Պէշիքա երթալն արդարացաւ ի պատ-ճառս երկուցի խռովութեանց ի Կ. Պօլսի : Իսկ այժմ , կը յաւելու յիշեալ թերթն , Բարձրագոյն Դուռն պիտի չնկատէ՝ որպէս և յայնժամ , զյու-ղարկումն նաւատորմին իրիւ բարոյական գոր-ծակցութիւն մի . և Անգղիան կը փափաքի որ Օսմանեան կայսերա . կառավարութիւնն սխալ կարծիք մը չունենայ ըստ այսմ մասին » :

Պէրլինէն հասեալ հեռագիր մի կը ծանուցանէ թէ հարցումն լինելով Պիզմարք իշխանին թէ արդեօք գերմանական կառավարութիւնն դի-տաւորութիւն ունի՞ միջնորդ խաղաղութեան լինել ներկայ պատերազմին մէջ , պատասխանե-ր է թէ ներկայ պարագայիս մէջ որ և է միջնոր-դութիւն անկարելի բան է :

Պէրլինի և Վէնայի քաղաքային շրջանակաց մէջ կը կարծեն թէ Պուլլարիայի ապագայ իշ-խանութեան գահն պիտի յանձնուի Լուի տը Պագէմպէրկ իշխանին , որ Ալէքսանդր տը Հէս իշխանին որդին է և Սեծին—Բրիտանիոյ ծովա-յին ծառայութեան մէջ կը գտնուի տեղակալ հրամանատարի պաշտօնիւ : Լուի տը Պագէմպէրկ իշխանն ի վէճնա կը գտնուի այժմ , ուր ներ-կայալաւ Ֆրանչիսկո—Յովսէփ կայսեր , և տե-սութիւն ըրաւ Անտրասի կոմսին հետ : Յիշեալ բարձրա իշխանն պիտի փութայ երթալ յԵնդ-հանուր զօրանիսն Ռուսիոյ բանակին Գանուբի :

Հեռագրական լուրք՝ յուղարկեալք ի Կ. Պօլսոյ ընդ ամաթութեով 5—17 Յուլիսի :

Բեուֆ փաշան մեծ զնաոնեք հասոյց Ռուսաց՝ յանցանել նոցա ի Պալքան լեռանց : Ռուսաց զօրքն մեծ հարուած կրեցին ի Զաղրա :

Բեուֆ փաշան կը հեռագրէ թէ Ռուսաց զօր-ագնդերն յետո մընցան Եէնիշաղրայի մօտ :

Ի Լոնտոնէ ամսոյս 4—16էն կը հեռագրեն թէ Պուլլարիայի մէջ ի Ռուս զինուորաց ի գործ եղեալ անգլութիւնքն և աւերքն ի սրտմտու-թիւն շարժեցին զրոյր հասարակութիւնն :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Դիտողութիւնք ի պաշտպանութիւն գրա-բան լեզուին մերոյ , քաղեալ ի ՓԱՐԻԶ անուն լրագրէն , որ ժամանակաւ կը հրատարակուէր ի մայրաքաղաքն Գաղղիոյ :

« Է՛ և այլ խնդիր կարեւորագոյն որում համար-ձակեցայ ժողով եռանգեամբ զվոյթ ուշոյ ձե-րոց և զայնց ազգային խմբագրաց և գրչաց , որ զօգուտ գրագիտութեան մերոյ տանին ի սրտի : Այս է՝ վարումն աշխարհագրաւ լեզուաւ յամե-նայն գրուածս՝ որ այնքան հասարակեալ և յա-նախ արդ յՕսմանեան կողմանս , որպէս և ի Հայաստան , և այլ ամենայն ուրեք :

« Եւ ջատագովութենէ ձերմէ ընդդէմ անհե-թեթ և դաւաճան կարծեաց Մեղ-իւն , որ ակ-նարկէ ազնիւ իմն ախորժակաւ ի բարձումն խա-ղաղ գրոց բարբառոյ մերոյ , հաւաստի եմ զի պաշտպան էք և սիրող ամենաշքեալ լեզուի մերոյ . և թէպէտ տեղեակ եմ զպատճառանաց որ զձեզ և զոմանս ի մատենագրաց և ի խմբա-գաց մերոց համոզեն կամ յաւէտ հարկեցուցա-նեն ի վարումն աշխարհիկ ոճոյն՝ անհանգուր-ծելի իսկ ամենայն կիրթ ախորժակաց , որ է՝ զի դիւրիմաց եղիցին գրուածքն ամենայն ընթեր-ցանելեաց ազգին . սակայն և այնպէս թուի ինձ զի և յայսմ սովորութեան վրիպի յոյժ դիտումն ձեր և հաւանեալ իսկ եմ եթէ փնտս առաւել լցէ յայսմ ընտրութենէ քան օգուտ : Զրուելի

և ողբալի կացուցեալ է ապաքէն սովորոյթ-այոք զվիճակ գրականութեան մերոյ , և յաւէտ ցաւագին զի օր ըստ օրէ տածի և ընդարձակի այդ տգեղ և անբարեկիրթ եղանակ գրութեան յամենայն այժմու օրագիրս և ի մատենագիրս մեր ի վտանգ արկեալ և զբովանդակութիւն և զանարատութիւն լեզուի մերոյ . այն ինչ թեկն ածէ աւանդ ևս քան զնա խորթ անընտել և ան-խմանալի առնել զհարազատ բարբառ Հայոց , որ գրոցն է անշուշտ , Բայց որ պարսաւելին է քան զամենայն՝ միանդ ամայն և դժպատեհ և փնտա-կաթ , զի դպրոցական մատենաք՝ սկիզբն տրա-րեալ յԱրեւմտարանէ մինչև յընթերցարանս , ի քերականութիւնն և ի Պատմութիւնն ազգաց և աշխարհաց , շարագրին , տպին և ուսուցանին անխտիր յայդ լեզու աշխարհիկ (լեզու և ոճ իմն) որ , պարտաւորութեամբ ասել , երեւի յատուկ տենչալի լինել և ներդաշնակաւոր հնչել յա-կանջս ոմանց ի գրչաց , թէպէտ և ամենայն կո-րծութեամբ և զհնչելով որ և է քաղցրութեան և դաշնաւորութեան յոր կարէ լեզու Հայոց ի սրբութեան իւրում ունել զիրաւունս : Իցէ թէ հեզ և խոնարհ դիտաւորութիւն է այնպիսեաց զարգացուցանել զտառապեալ որդիս Հայոց գլխովին և ազգովին ի գեղճուկս և ի գեւհիկս արանց : . . . Աւանդ աւանդ յոր աստիճան յաճու-թեան և ստորանկութեան է , ևս և միջ զինքն յամենայն կողման տարաբաղտիկ ազգ մեր) փո-խանակ զի յամենայն քայլ իւր այժմ , զի յա-մենայն շարժմանս իւր որ ինչ գոգցես թողեալ

է յազատ և ի բնական գնացս՝ զամենայն հնարս հայթայթէր , զամենայն ճիւղն թափէր ամբառ-նալոյ զինքն ի կարգ բարեկիրթ ազգաց , և հա-ւասարելոյ ըստ կարի նոցա , որպէս պահանջեն և համբաւ նոցա իսկ և հաւատք : Թող գէթ ա-շակերտք նոր դպրոցաց , որք են հայեցուածք ապագայ յուսոց մերոց , թող գտնէ սերունդք արդեան ազգատոհմի զանազանիցին ի մէջ ի սակի դաստիարակութեան և հրահանգութեան : Թող անխաբար՝ ուսմիկ և աննուէր բար-բառ մեր որ անկեղծ Հայրենեաց յաւերժական յարացոյց նկարի ի ցաւ սրտի , գտնէ ի տպի ջնջնոցի իսպառ և անհետացի ի միջոյ՝ ընկճեալ ի ներքոյ ընդհանուր կիրարկութեան բուն և սեպհական լեզուի մերոյ :

« Տեսցուք սակաւուք և ի խոհեմ պատճառս այսպիսի տիեզերական գործածութեան աշխար-հաբառին յազգի մերում : Այս են , որպէս ասի դիւրիմաց և հասարակուսոյց ընծայել զգրուածս ամենեցուն : Իսկ մեք թերահաւատիմք յոյժ զայսպիսի արդեանց , և պնդեմք զի այն ինչ սո-վին կարգաւ կորնին անտարակոյս բնական քաղցրութիւն և հաճոյք գրաբառի ոճոյն՝ մի-անգամայն և ազգութեանք նորին , բազումս այն է զի և ոչ իմանալի լինին ումեք ճիշտ և ու-ղիղ միտք իմաստիցն . մաւաւանդ ի նիւթս բա-րոյականս և քաղաքագիտականս : Սմին իրի կո-րուսանողք են միապէս եւ գրագէտք եւ ան-հմուտք յայսմ եղանակէ շարագրութեանց . քանզի մինչդեռ անհնար է բարեւել իւրիք ա-

Յանգելու ման արտաքին գործոց տեսուչ վսե. Սաֆվեթ վաչան հետեւեալ շրջաբերական հեռագիրն ուղղեց առ օսմանեան գեսպանս՝ որք Եւրոպայի տէրութեանց քով կը գտնուին. Յիշեալ հեռագիրն՝ որոյ թարգմանութիւնն ՄԱՍԻՍ լրագրոյն կը վերաբերի, անշուշտ տխուր տպաւորութիւն մի պիտի ընէ ի վերայ բոլոր ընթերցողաց մերոց :

Մեր իշխանութիւններն ամենամանր գործեր կը ծանուցանեն մեզ. զորս մեր հոգը մանող Ռուս զօրքերը կը գործեն, և կը հետեւի այն գործերէն որ Ռուսք սպանութեամբք՝ աւարարութեամբք և հրճութեամբ կը վարուին :

Այս գործերէն հետեւեալներուն ստուգութիւնը բացարձակապէս հաստատուած է :

Ռուսական զօրքերը Ձիշթօյի մօտ (Պաթաք անուն) իսլամ գիւղ մը կոխելով այրեացաւեր ըրին և բազմաթիւ խաղաղ մարդիկ ջարդեցին :

Ասկէց զատ նոյն գիւղին ուրիշ վեց բնակիչներուն պատահելով՝ անոնց վրայ յարձակեցան, թէ և անոնք ընդդիմութիւն չէին ընել, և մին սպաննեցին, միւսներն ալ գերի տարին :

Ուրիշ եօթը մարդիկ ալ Ռուսներէն իջեալ իրենց հայրենիքը գնացած ժամանակին՝ Ռուսաց հեծելազօրէն ջարդուեցան, և մին միայն կրցաւ ճողոպրել : Ռուսք այն գոթապղծներուն դիակներն ալ սոսկալի կերպիւ պղծեցին. անոնց աչքները խեցին և տեղը հայ խօթեցին :

Ձիշթօյի Պուլղարները՝ թշնամոյն ներկայութեանէն գրգռեալ փախչող իսլամները կը ջարդեն, և ութ թուրք զօրականք՝ Ռուսաց ձեռքն իյնալով՝ դաւազանի հարուածներով սպաննուեցան : Նոյն անգիւթիւններն Ասիոյ կողմն ալ կը գործուին, որոյ պիտաւորներն են հետեւեալք :

1500 Սօխում—Գալէցի ընտանիք՝ խաղախներուն խժոժութիւններէն ազատելու համար անտառները փախած ապաստանած ըլլալով, առօթի մեռան :

Արտանուշ գրաւող Ռուս զօրաբաժինը դէպ ի սահմանագլուխ քաշուած ժամանակ՝ ամեն տեղէ և հասակէ յիսուն հոգի սպաննեց և անշուշտ քանի մը գեղերու տուններն այրեց :

Իււշ Քիլիսէի Հայ եպիսկոպոսը ամարգաբար յռնելով և պինդ մը պրկելով՝ այն սոսկալի վիճակին մէջ Ռուսիա տարեր են :

Այս իրողութիւններն, որոց վրայ մեկնութիւն տալն իրենց աղղած սոսկումը կը տխրաբանէ և զորս կը ինքզինքն՝ որ հասարակաց խղճին ներկայէք, ռուսական զօրաց անցած ամեն տեղերը կը ընդհանրանան, թէ Եւրոպայի և թէ

Ասիոյ մէջ, և բնաւ տարակոյս չեն թողուր ըստանութեան և աւերման ծրագրին վրայ զոր թշնամին ընդունած է՝ երկիրը սարսափեցնելու և չկռուող ժողովուրդը ջնջելու համար :

«Ի նպատակ պատերազմական ծախուց ընդհանուր հանգանակութիւն մը բանալու համար կանոնագրութիւն մը հրատարակուեցաւ, յորմէ կը տեսնուի թէ մայրաքաղաքիս և գաւառացի մէջ յատուկ մասնախորհուրդներ պիտի կազմուին հաւատարմամբներէ, որք մինչև 40 փառայ ամական հանգանակութիւն պիտի հաւաքեն մինչև պատերազմին վերջը :

«Կ'Պօլիս քաղաքը զատ վերայէթ մը նկատուելով, 18 Սանճագի պետի բաժնուի և ամեն մէկ թաղերու և գիւղերու մէջ մէկ մէկ մասնախորհուրդ պիտի կազմուին, որք առանց սեռի և ազգի խտրութեան բոլոր բնակիչներն ի ստորագրութիւն պիտի հրաւիրեն և անոնց կամաւոր հանգանակութիւնն ընդունին առանց որ և է ստիպման :

«Հանգանակեալ գրամոց ճշդիւ արձանագրութեան, անկորուստ պահպանութեան և սահմանաւ նպատակէն զատ ուրիշ բանի չգործածուելուն համար՝ ամեն պէտք եղած ապահովութեան միջոցները ձեռք առնուած են վերոյիշեալ կանոնագրութեան մէջ» :

ՄԱՍԻՍ

—Դարձեալ վսե. Սաֆվեթ վաչան հետեւեալ հեռագիրն յուղարկեալ է առ օսմանեան գեսպանս յԵւրոպա :

«Կ. Պօլիս, 29 Յունիս 1877
«Ըստ հեռագրական լրոց ընդունելոց ի Բ. Դուռն, Ռուս զօրաբաժին մի ամսոյ 25ին ի Ռէսթման և ի Պէլովան գիւղն հասանելով՝ ժողովեաց զգէն Միւսիւլման բնակչաց և բաժանեաց զայնոսիկ Պուլղարաց : Յետոյ սկսաւ վարիլ ընդ Միւսիւլման ժողովրդեան միւսնոյն կերպիւ որպէս յառաջագոյն, այսինքն կոտորածով մարդոց, կանանց և տղայոց, և հրկիզութեամբ բնակարանաց նոցա :

«Այս եղելութիւնքն տան մեզ հաւատալ թէ Ռուսաց այժմեան գրութիւնն է ջնջումն Միւսիւլմանաց յանցս զօրաբանակաց իւրեանց, և թէ գոթապղծ հաւատակիցք մեր պարտին սպասել յոյժ սարսափելի և յոյժ բարբարոսական վարմունքի ի կողմանէ թշնամոյ միոյ, որ բարձրաձայն հռչակէր զինքն իբրեւ անկողմնասէր պաշտպան մեր ամեն զոյժովոց :

«Ոչ կարեմք երկրպիւղ թէ Եւրոպան պարտի մեծապէս սրտմտիլ և ի սիրտ յուղիլ ի լուր այսպիսի անգիւթեանց» :

Նուս և անհրահանգ մտաց զիմաստս վսեմ, և հասու լինիլ տրամաբանական կամ ձեռնարկական նիւթոց : Դրով և է եղանակաւ մատուցեալ նմա, կարի ծաղրալի և անօգուտ լինին վորձք բաժայտեղոյ կամ ի քննին առնոյ զնոսա յաշխարհաբառ լեզուի : Եւ այնպիսի բռնադատական ոճ յաւէտ միութիւն արկանէ զնոքք, քան եթէ ստորագրել կարէ, թողլով անձնաւոր վերմանողի ընդունել զնոսա ըստ իւրում քմաց և ըստ իւրում տարազու խորհրդածութեանց : Այլ քանզի դրոց են բաւքն վարեալք և յաշխարհաբառին մեր ըստ մեծի մտոյն, որք ծառօթք ինչ իցեն նշանակութեան նոցին կամ ընդունակք հասանելոյ մտաց մատենագրաց, թէ պէտեւ անտեղեակ արհեստին փերականութեան, կարեն գիւրաւ իմանալ բանս եթէ շարագրեսցին պարզ և ուղիղ դրոբառաւ, փոխանակ յոյժմու կը ճատ և աղաւաղ ոճով խօսեալութ լեզուիք : Իսկ ի մի կողմն եղեալ զամենայն այլ յատնառս և խորհուրդս որք միշտ նախընտիր և պատուական կացուցանեն առմեզ, որպէս և առ ազգս ամենայն, զվարուէն ի տայի դրոց լեզուի, յոր և եթէ երեւի այն իբրեւ ի բնական տարեր իւրում, սակայն և յամենայն իրա ստի չարին փոքրագոյն է ընտրելի : Սմին իրի ի քննութիւն առեալ և ի կշիռ գյարակից օգուտս և ճշատ լեզուաց երկուց, որպէս վարին այժմիկ, հաւանեալ եմք աներկեան զի առ այժմու վիճակ հրահանգութեան ազգի մերոյ խոհական իցէ վաղ վաղակի բառնալ ի միջոյ զլսողին կիրարկութե

ռամականիդ այդորիկ ի տպագրութեանց մերոց, զի որով կենդանացին յաւէտ հետամտութիւնք, փափաք և ջանք հասարակաց զուսմանէ գրոց բարբառոյն :

«Են, որպէս ասացաք նիւթք զոր ընդունայն վաստակիցին գրիչք յայտնել հասարակաց ի լեզու աշխարհիկ : Գի ոչ անկիրթ դասուն լինին իմանալիք, և ոչ կրթելոյն : Այն են՝ ամենայն իմաստք վսեմք թէ բարոյականք իցեն և թէ իմաստաւորականք : Ամենայն նիւթք ձեռնարկականք՝ ընդ որս և փաստաբանութիւնք, ատենաբանութիւնք և ճառք : Ամենայն խորհրդածութիւնք և նկատմունք քաղաքագիտականք : Միով բանիւ, ամենայն խնդիրք ինչպէս : Թող ուրեմն ի սակս բարութեան՝ դրեսցին այսոքիկ ի լեզու իմն գոնէ պիտանացու միոյ դասու ընթերցողաց : Այլ եթէ հարկ իցէ անհրաժեշտ ունել տակաւին առ ժամանակ մի նըպատս յաշխարհաբառէն մինչև յառաւել զարգանալ ուսման ի մէջ մեր, թող վարեցի այն միայն յորժամ խօսին զնիւթոց հասարակ տեղեկութեանց, որպիսի են նորալուրք առտնին պատահարաց՝ կարեւորք անմիջական գիտութեան հասարակաց, ծանօթութիւնք առեւ տրականք, այսինքն զմիտրոց և զկրպակաց, և եթէ հարկաւոր դատելի մերժ պարզ և գիւրիմաց բանք խորտականք կամ կրօնականք : Բայց այժմ... սոսկալի է արդարեւ անսահման, անընտիր և անայլայլելի ընթացք դրեաց ի հանապազորդել անընդհատ զայդ սովորութիւն անկիրթ բարբառ

—Մեծաշուք մօսիւ տը Պիւրկրաֆ, որ Գաղղիոյ ընդհանուր հիւպատոս է ի քաղաքիս և երեցագոյնն հիւպատոսաց խմբին Ձմիւռնոյ, հրաւիրեցաւ ի պաշտօնակցաց իւրոց շնորհալու լինել վսե. Սապրի փառային վասն անդորրութեան և բարեկարգութեան, զորս յաջողեցաւ հաստատուն պահել ի ժամանակի երկար բնակութեան բազմաթիւ զօրաց և կամաւոր զինուորաց, որք կեդրոնացեալ էին ի Ձմիւռնայրեց ամսոց հետէ և որոց ամբողջ թիւն, որ ի Պօլիս յուղարկեցաւ, եհաս մինչև ի 50,000 հոգի :

Մօսիւ տը Պիւրկրաֆ յանձնեաց նաև մեր վսե. վարիին զհաւաքական երկրորդ նամակն շնորհակալութեան, որոյ թարգմանութիւնն հետեւեալն է : Ձմիւռնա, 10 Յուլիս (ն. Տ.) 1877

Վսե. ընդհանուր կառավարիչ,

Ստորագրեալքն՝ որք անդամք են հիւպատոսական խմբին, պատիւ համարին անձանց իւրեանց աղաչել զձեզ բարեհաճիլ ընդունել յանուն ազգայնոց իւրեանց, զհաւատարմ խորին երախտագիտութեան իւրեանց վասն խոհական և ազգու բարեկարգութեանց գործադրելոյ ի վեմութեանէ ձերմէ առ ի ապահովել զանգորութիւնն քաղաքիս ի ժամանակս բնակութեան կամաւոր զինուորաց, որք բազմութեամբ սպասէին տատ վասն ուղեորելոյ ի Կ. Պօլիս :

Կայսերական գահունակութեան յայտարարութիւնքն զորս գուր ընկալայք, արժանաւոր վարձատրութիւն են ձեր վեհաձայնական հրահանգն և յոյս տայ մեզ կարող լինել պահել զձեզ ի մէջ մեր զերկար ժամանակ :

Ապահովացուցանելով զձեզ վերտոնին թէ գործակցութիւն մեր երբեք ոչ պակասեցի յամենայն անգամի որ արժան դատեսցիք խնդրել զայն առ ի հաստատուն պահել զանգորրութիւն քաղաքիս, մնամք և այլն :

Հետեւին ստորագրութիւնքն բոլոր հիւպատոսաց քաղաքիս, որոց մէջ հաճութեամբ որտի տեսնեմք զհայկական անունն «Յօհաննէս Պ. Ա. քնալըեան», որ ստորագրեալ է իբրեւ դիւանագր. (քանչէլիէր) թարգման Պարսկոց հիւպատոսարանին ի բայակալութեան հիւպատոսին :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԱԽՈՒՑՈՒՄՆ

Ձմիւռնոյ կայսերական զօրանոցին բժշկական տեսչութիւնն, բարձրագոյն հրամանաւ կը հրաւիրէ օսմանեան զօրաբանակին ծուռայութեանը մոնել ուղող յարգոյ բժիշկներն և վերաբոյժներն, որ բարեհաճին ներկայանալ ի յիշտալ զօրանոցն ամեն օր առաւօտեան ժամը Ցէն ըստ ձրանկաց՝ մինչև ցիէսօր առ ի համաձայնիլ ի վերայ պայմանաց ծառայութեանն :

Ձմիւռնա, 17—29 Յունիս 1877 :

Ույ յամենայն աղգս գրուածոց, որպէս թէ նախատիպ լեզու Հայոց էր աշխարհաբառն, և ոչ խանգարանք կամ խոտորումն առաջնոյն, որ և բացարձակապէս եղբրէ զաղդ մեր զոյ բովանդակ՝ ազգ անուս և անգէտ գրոց, որ չէ այնպէս... այլ եղիցի անշուշտ եթէ ոչ երկարատես լեալ ըբանիցեն արդէն զառիւ վտանգին այն ամենայն խմբագիրք օրագրաց և հիւղիտիք գրոց, որ այժմ գոգցես տեփանք իմն քաղաքի լինին բարդաւածման օր ըստ օրէ խառնաղանջ լեզուիք : Պարտիմք յաւէտ եթէ հնորիցէ ջանալ և բառնալ զայն սակաւ առ սակաւ և ի զրուցից բերանոյ կամ գոգցես բարեկարգել զայն, որ չէ ինչ գոհարին եթէ վայր ունիցին միայն ուսուցիչք ի վարժարանի, և ծնողք ի տան այնպէս խօսել և այնպէս մարդել զմանկունս իւրեանց, մանաւանդ են պարտիք ուսուցչաց հոգ ունել յայտնիլ : Մեծ իմն գործ աղղափրական վարկեալք՝ ըստ մեր կարծեաց եթէ ամենայն ուրեք ուր գտանին գալոցական մատենք ի լեզու աշխարհիկ և գուհիկ ի մի հաւաքեալ հոյ ճարտի արտայեն : Յուսմք սկսանիցի բարեգործութիւնք ի թէնդոսիւս :

(1) Լուեալ մեր գտպելոյ պատկե ալարդ Այրբեհաբանաց ի Փարիզ, ուրախացար յոյժ ընդ երեւել քեպտեւ անցնալ այլ ցանկալի եւ հարկաւոր մատենիք յազգս մեր, որ այնքան հասարակեալ է եւ բազմապիսի մէջ Եւրոպացոց, մանաւանդ զի վասն կարի սակաւութեան զպրոցական մատենիք եւ կարեւորութեան նոցին առմեզ, արժանի է ուրախ լինել միշտ

ԱԶՓԱՅԻՆ

Վանայ գաւառին մէջ բարձրաբար քրդաց գործած ասպատակութեանց նկատմամբ սրբազան Պատրիարք հօր անցեալ շաբթու առ Բարձրագոյն Դռնն ուղղած դառն գանդատանայ վրայ, ներքին գործոց նախարարութիւնն հեռագրով տեղեկութիւն խնդրած էր վանայ կուսակալ Հասան փաշայէն: Նորին վսեմութիւնն երկար հեռագրով մը Ս. Պատրիարքին գանդատներուն ստուգութիւնը հաստատելէ զատ, տեղեւոյն Հայ ժողովրդեան թշուառ վիճակը նկարագրելով կը յայտնէ թէ մեծ մասը մերկ և լոկտան են, և թէ մէջերնուն շատն ալ հացէ զուրկ անօթի մնալու վիճակի մէջ կը գտնուին, այնպէս սր յիշեալ ժողովրդեան թշուառութեանն ու խեղճութեան հաւասարող ուրիշ ժողովուրդ մը չկարծեր որ գտնուի աշխարհիս վրայ ուրիշ որ և է տեղ մը:

Բարեկրթ կուսակալն երկրին Հայ ժողովրդեան այս ողբալի վիճակը նկարագրելէ ետեւ, առաջին առնելու անմիջական պէտքն ու կարողութիւնը կը ճանչէ, և կը յայտնէ թէ առաքառութեանց և սպանութեանց վախճան տարու և ներքին բարեկարգութիւնն ու հասարակաց անդորրութիւնն ապահովելու համար՝ զինուորական զօրութիւն հարկաւոր է. ուստի և կառավարէ Բ. Դրան որ անյապաղ յիշեալ գաւառը զինուորական բաւական զօրութիւն մը չընկելու միջոցներ ձեռք առնուին:

Հասան փաշայի սոյն անկեղծ տեղեկագրին վրայ պատեւարական գործոց նախարարն հեռագրեց Մուսուլի զօրաց հրամանատարին որ պէտք եղածին չափ զինուորական զօրութիւն պատրաստելով անյապաղ վանայ գաւառը զրկէ կուսակալին տրամագրութեան ներքեւ դնելու: Այս որոշումն ու անօրէնութիւնն հինգշաբթի օրը վսեմա. Սալիֆէթ փաշային կողմանէ Պատրիարքական փոխանորդ գերա. տէր Հօր հազորդութեամբ, Պատրիարքարանէն ալ այս շաբաթ օր յատկապէս հեռագիր քաշուեցաւ վանայ փոխ. Սալիֆէթ Երեմիա եպիսկոպոսին, որ վանայ կուսակալին աջակցելով՝ Ն. վսեմութեան հետ աշխատի տեղեւոյն ժողովրդեան վիճակը բարեփոխու, բարեկեցութիւնն ապահովելու, և Բ. Դրան բրած տնօրէնութեան անթերի գործադրութեան հօդ տանելու:

ՄԱՍԻՍ

ՓՈՒՆԶ լրագրոյն Յունիսի 25և29 թուոց մէջ

Վնն ինչ ի վերայ նախընթաց առարկայի աշխարհի բարբառոյ յուշեղև ինձ առնուլ նուագեցաւ յոյ սակաւութեան և շրջապատ խնդիր:

Վեղու մեր զոր սիրեմ և մեծարեմ (իցիւ թէ և կարէի բաւական իրաւունք առնել նմին, զոր անկէ ինձ թողուլ գերա. հարց Յիւստինիոսի վերաբերեալ, Արսենի Բագրատունեան, խորհրդակցութեան և այլոց նման հանձնարող (ընդ) լեզու մեր՝ ասել կամիմ արարեալ է այս կէտ զարժանազով յառաջադիմութիւն, որ պարտիմք շնորհակալ լինել անմահ երանութեամբ, յայտնի արդարեւ ազգասիրական զանց և արժանաւոր վատասկոց Միսիթարայ խառնութեանն, մանաւանդ սրբազան Հարցն վեր անդր ակնարկելոց, որք գեղեցկացուցող և ազնուացուցեալ են զլեզու մեր՝ պատ-

ի յոյս ածուսմ որոյ եւ գրոց անտի: Ուստի փութաւ կառավարչութիւնն ազգային ուսումնարանի խնդրել օրինակ ինչ ի նորատիպ Վլադիմիրայ Չմիսկինոյ, որ հասին աստ անցեալ յոգեման իսկ գերեւումն մեր մեծ էր ընդ գտանել զնոսա ի յայտարարիկ, գորմէ զկարծիս՝ տուեալ ի պարոն վախճան վարժապետէ ուսումնարանի մերոյ օրինակէր աստ:

Վախճարագար (Վլադիմիրայ) մանկանց տղայք ի Փարիզ եկին ի ձեռս իմ. եւ վիշտ է ինձ ասել զմարքի հարկանել նոցա զպէտա ուսումնարանից որոյ բաւ կամի եւ կարգի մերում: Վլադիմիրային ամբողջ լեզու, որ ի նախաշարք (Վլադիմիրայ) ի բան եւ էր ծարակէր ընթերցուածոց, աստ եւ վախճարագար եւ ի բան առհասարակ: Չարմաւոր որ ինչ անդր ընծայութեան նորին ընդ աշխար-

դիւտագայ շրջակա ազգային յօդուածն ընթերցուածք:

Պատրիարքարանէն շնորհակալութեան գիր գրուեալ է ի Փարիզ առ վսեմափայլ Գեորգ-Պէյ Երամեան, հանդուցեալ արդիւնաշատ Թէոդորոս վարդապետի կենաց մնացորդ օրերը սիրով փելուն, և իւր խնամքն ու հոգածութիւնը մինչև նորա դամբարանին գրունքն տանելուն համար: Միանգամայն խնդիր եղեր է Ն. վսեմութեան, որ հանդուցելոյն գրեանքն և ուրիշ գոյքը կամ իւր խնամքն ներքեւ առնու և կամ Պատրիարքարան զրկէ:

Փարիզէն գրուածին նույնով՝ Թէոդորոս վարդապետ թողեր է հայերէն ու գաղղիարէն 285 կտոր գիրք, մեծ մասն ընտիր, նոյնպէս զանազան ձեռագրեր, յորս իւր անտիպ երկասիրութիւնք ալ կը գտնուէին եղեր. և որ կարն որագոյն է՝ Սամուէլ Մուրատոյ կտակին ձեռագիր մէկ հին օրինակը, և գրամոց հաշիւը ու 100 հազար զուրուշի պարտամուրհակ մը՝ իրեն սեղահական: Շատ տարիներէ յառաջ լսած եմք, թէ Թէոդորոս վարդապետ 100 հազար զուրուշի առնելով ունի պօրեցի ազգայնոյ մը վրայ. բայց պարտական արդէն ելած է աշխարհէս, և կարծեմք՝ իւր պարագայք ալ չեն կարող վճարել:

Կառավարութիւնը այս օրերս շնորհ մ'ալ բրած է մեր Պատրիարքարանի: Հրաման եղեր է հեռագրութեան վերատեսչին, որ Պատրիարքարանէն Առաջնորդաց ուղղեալ պաշտօնական հեռագրերն ձրի ընդունուին: Վերաանուէն այս հրամանն ի պաշտօնէ հաղորդած ըլլալով՝ քանի մ'օրէ հետէ ձրի կը տրուին Պատրիարքարանի հեռագիրքը:

Կըյուսամք, թէ Առաջնորդաց կողմանէ Պատրիարքարանի քաշուած հեռագրոց համար ալ այս շնորհը կը ըլլայ, որով մեր կեդրոնական և գաւառական մտտուկները գէթ այս մասին կը թեթեւան, և հեռագրական բանակցութիւնը երկու կողմանէ գիւրացած կը ըլլայ:

ԱՐՄԵՆԻԱՆ ՄԱՍԻՍԻՍ Եւրոպայի ամառապետին մէջ պարոն Մ. Մամուրեան պատուելին հետեւեալ կերպով կը խօսի իւր վաղեմի դասաւանդերա. Այվազեան սրբազանին վրայօք:

«Եթէ կայ անձ մ'որ գրարաւոր շեքմ պաշտպան լինելու իրաւունք ունենայ, այս է գերա. Այվազեանն, որու հեղինակութիւնն այս մասին միշտ արդարեան... հեղինակութիւններու շնամիր: Այլ սակայն այս քաջամուտ գրաբառագէտն ալ կը գրայ որ ժողովրդեան հետ ուսական և լուսափայլ հանճարով իւրեանց սակայն, հայերով ի բնական և ի պէսպիսի ճոխ յարմարութիւնն և ի գիւրուցութիւնն լեզուի մերոյ վանք ընդարձակման, չէ՞ նա տակաւին բոս բաւականին մշակեալ և կախի զբարգաւաճմանէ ուսման և եթ ի մէջ մեր հասանել անգամ կատարելութեան: Բայց աւաղ նման ամենայն հանգամանաց մերոց, և զքանի՞ անհաստատ կերպարանս չընծայեն արդեօք դժբաղտ լեզու մեր և գրականութիւնն:

«Շատ են իմաստք գրոց, զորս ի յեղուլ յեւրոպական լեզուաց ի մերս՝ իւրաքանչիւր գրիչ ընտրէ զիւր բառս ի բազմութիւն համանշան բառից մերոց, զանազան յայլմէ, և որպէս ունին իւր կամ ախորժակ տայ նմա բարեւթ վարկանել. այն ինչ յեւրոպականին ամենայն մատենագիրք համանշան գնան, և վարեն միապէս

հաբա. խօսս մանկան, գոչակն իմն առնէ երբ մանկտի մեր յայն կողման վարիցին Տաճկական կամ ոչ հայեցի լեզուա: Սակայն խոսեցոյք յայդպիսի դժայի կարծեաց գեր առ պատիւ լուսաւորութեան դարոս: Մէք քե եւ ուղղութեամբ ջափ դատապարտեմք զամենայն այլագի բառս սարգեալս ի մանկտից զմեք, եւս եւ ի հեղամեայս, այլ իցին ամենայն վարժարան եւ վարժապետ եւ տղարան քնմք ամուր կանգնին ընդդէմ ապստամբ խառնախօսութեան:

«Ինչ խղճիկ այսօր իսկ անձկալ ժամուն՝ յարում այս հիւանդութիւն բարբառոյ՝ խոց ամենամեծ ի զնացս գրականութեան մերոյ, բուժեցի իսպառ, եւ հարազատ ոճ հարցն մերոց գաղափարք ի բան եւ ի գիրս հասարակաց, սկզբն արարեալ անդտին ի բերանոյ յողայոց մերոց»:

և մէջ ապրելու համար պէտք է որ նոյն ժողովրդեան լեզուն խօսի, գրէ և ուսցունէ»:

Այս տողերէն կը տեսնուի որ պարոն Մ. Մամուրեան կը կարծէ թէ Թիֆլիզի Առաջնորդ և Ս. Էջմիածնայ հեռարանին վերատեսուչ գերա. Այվազեան գիտնական սրբազանն իրեն համար միտ՝ այսինքն աշխարհաբառեան է: Բայց մեծապէս կը սխալի. և վստե ապացուցանելոյ զմեծ սխալ իւր՝ արժան կը համարեմք Նորին Սրբազանութեան Յունիսի 7ին առ մեզ գրեալ նամակէն հետեւեալ պարբերութիւնն յառաջ բերել:

«Չխնդրոյ գրաբառին և աշխարհաբառի չեւս մարթացայ դատնել պարագ վանք գրելոյ ինչ ընդարձակօրէն. սակայն ոչ սակաւ միսիթարիմայնու զի գտանին այդը և այլուր ախոյեանք քաջարիք պաշտպանք պատուական լեզուի նախնեացն մերոց»:

Հարկ կը համարեմք ի պատիւ ճշմարտութեան հրատարակել զհետեւեալ նամակն, և միւսնոյն պատճառաւ պարտ անձին կը համարեմք յայտնել թէ յիշեալ վարդապետն միւսնոյն ստախոսութեամբ յաջողեալ է ընդունել ոսկի խաչի շքանշան մի՞ ի վեհա. Ս. կաթողիկոսէն ամենայն Հայոց, որոյ կողմանէ տուեալ վկայականն կապացուցանէ զստուգութիւնն մեր զրուցածին:

Եւրոպայի խմբագիր ԱՐՄԻՍԻՍԻՍ

Իզմիր, 7 Յունիս 1877

Կ. Պոլսոյ ՆՈՐ ԴԱՐ անուն լրագրոյն Յունիս 18 թուոցն մէջ հետեւեալ ազգը կը խօսեւորուի:

«Այս կիւրակէ Յունիս 19 խորհրդոյ կողմանէ մասնաւորապէս հրաւիրեալ է Չիւսուիայի Նախագիւրդ-Պէյրէզ գերա. Պատրիարքարանի ներկայացանէ Ս. Գեորգ Երեղեցւոյ մէջ, Եւ զոր ի գիտութիւն յերմեւանդ Հայ ժողովրդեան՝ ձեր թերթին մէջ հրատարակելու յօժարեցինդ կը խնդրեմք:

Ի դիմաց թաղա. խորհրդոյ 1877 Յունիս 19

Արշալույս և Արշալույս

Սամաթիա Պ. Թիւ-Եւս Եւրոպայի խմբագիր:

Սամաթիոյ Թաղական խորհրդոյ կողմէն հրատարակեալ սոյն ազգը, եթէ ձիւղեցի կէտ մը ունի՝ այն ալ Պատրիարքարանէն (Չիւսուիայ) Նախագիւրդ-Պէյրէզ գերա. Պատրիարքարանէն է:

Ասիկա քիչ զարմանք չազդէր Իզմիրի Հայ հասարակութեան, որ ամենեւին այդ վարդապետը ոչ իբրեւ առաջնորդ ընդունած է իրեն, և ոչ իբրեւ փոխ-առաջնորդ. հետեւաբար այդ ձախորդ և ինքնակոչ անուանումը իր կողմանէ եղած է յիշեալ թաղական խորհրդոյ. որ ան-

ընդոյն բառ, և զոր չէ մարթ նոցա ի կիրարկանել ի տեղի միւսոյ: Սոյն այլալուրթիւն բառական ընտրութեան առ մեզ, տեսանի յաճախ և ի գրուածս հմտաղ ունիցն մերոց արդի գրեաց՝ Միսիթարեան ուստի, որք արդարեւ իրաւամբ ի սակս կիրթ և բնտիր ախորժակաց իւրեանց և հմտութեանց, կառավարել են լեալ ի յետին ժամանակս լեզուին Հայոց: Այլ ակնարկի՝ է զի տակաւին մինչև ցարդ չեն յորինեալ զկատարեալ բառարան մի Հայկեան և եւրոպական լեզուի ի վերայ այնպիսի սկզբանց, որք օրոշեալ և սահմանեալ իցեն զարաբերական նշանակութիւնս բառից և բացայայտութեանց կրկին լեզուացն՝ ճիշտ և անփոփոխ կանոնաւ, պարտաւորել և համագիշ ամենայն վայելուչ դրչի հնազանդել նմին:

«Ցանկայի՛ է յոյժ և ժախ խնդրեալք յարգանք ի յիտնականաց մերոց փոյթ յանձին ունել, և ի բաց եղեալ զամենայն կանխակալութիւնն և անձնային հաճոյս թէ իցեն միաբանել ի հաստատել զգրութեան զատաստան մի առ այս պէտա զի ամենայն նորակերտ և նորամոյժ բառք և բացատրութիւնք, որ հարկաւոր են առմեզ թարգմանաբար յեւրոպականէն գործադրութեան, նախ առաջին մասուսցին ի քննութիւն և ի վճիռ դատաստանիդ այդորիկ, ապա հաւանութեամբ կամ փոփոխութեամբ առ ի նույնն, թաղացուցին կիրարկութեան:

Ա. Պ. ԱՂԱՆՈՐ

(Մեացորդ յաջորդ բուռով)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

շուշտ այդ վարդապետը առաջին անգամ տեսած ըլլալով, միամտօրէն խաբուած է :

Կրկնէրեմբ, տէր խմբագիր, որ սոյն երկտողս չնորհ ընէք հրատարակել ձեր պատուական լրագրոյն մէջ : Մնամ՝ Եւայն Բ. ԲԱՅԷԼԵԱՆ

Ի նամակէ պատուական բարեկամի մերոյ յարգոյ պարոն Մանուկի Որդանանեան՝ Ի Պաշտօնական Բնակելոյ, հաճութեամբ սրտի յառաջ բերեմք զհետեւեալ աղգասիրական տողսն՝ Ի պաշտպանութիւն գրաբառին :

«Տրամեցայ ոչ սակաւ ընթերցելով ի թիւ 1060 ԱՐՇԱՒՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ գրաբառին դաստառութեան գրաբառ գեղեցիկ լեզուին մերոյ, և փոխանակ նորա զյաջորդելն աշխարհիկ բարբառոյն ի կրկին աղգային վարժարանս Զմիւռնոյ : Յաւալի է յոյժ և մանաւադ անխմանայ թէ ինչ դիտաւորութեամբ առնեն զայս անտեղի կարգադրութիւն : Յունամ թէ նորընտիր գերաւ Առաջնորդ վիճակին ձերոյ՝ որոյ զազգասիրական զգացմունս և զուսուսականութիւնն հաճութեամբ մեծաւ լսեմք, գուն գործեսցէ համոզել զՈւսումնական խորհուրդն վերադառնալ յուղիղ շաւիղն երանելեաց մերոց նախնեաց և անյողապղ ծնալ ի նմին՝ որ բարին է և վայելուցն : Բանգի ի բաց թողնուլ գրաբառն, ընդ նմին թողնալ ինքն կրօնն և լեզուն նախնեաց մերոց : և յայնժամ մնայ միայն Հայ առնուն, որ բնականապէս պահանջէ զայլ անուն մի առ ի որոշել զզանազան ժողովուրդս Հայոց : հաւանականաբար դուք պարտիք ընդունել զանուն «Թրքահայ» : Բայց ըստ իմ կարծեաց ոչ է հեռի ժամանակն՝ յորում ժողովուրդք ամենայն խոստովանել ունին թէ լեզուն աղգին Հայոց՝ է լեզու Ազամայ նախահօրն» :

— Ի Պաշտօնական Գ. տէր Գ. Գասպարեանէ, ի Պաշտօնական (Զուրյցէրիա) ի պարոն Մ. Պ. Հիւսեանէ, յեղիպտոսէ ի պատուելի Հ. Սաւալանեանէ և յայլոց հեռաւոր և ի մերձաւոր քաղաքաց ընկալաք բանասիրական ընդարձակ յօդուածս ի պաշտպանութիւն մեր գրաբառ ամենագեղեցիկ լեզուին, զորս հետզհետէ հրատարակեսցուք ի պատիւ, յօգուտ և ի զարգացումն ընտանեացութեան աղգիւ Հայոց, և ի միտքարութիւն ճշմարիտ հայրենասիրաց :

ԴԱՄԱՐՆԱ

Պ. Հ. ԵԱՆՎԷՔԻԼԵԱՆԸ

Աղգային վարժարանաց թուարանութեան ընդհանուր դաստառութիւն Գ. Հ. Եանվէքիլեանի Գունդու օղու խանին վերի յարկը թիւ 21 սենեակը բացած ըլլալով երբևէ դաստարան տոմարակալութեան, թուարանութեան և այլն, կը ծանուցանէ շուկայի մէջ գործով զբաղած երկտասարդաց և պատանեաց որ դաստառութիւն ընելու պատրաստ է : Հոն կրնան դիմել նաև հաշուի վերաբերեալ անհամաձայնութիւն կամ դժուարութիւն ունեցողները : Նոյն դաստարանն առայժմ բաց պիտի ըլլայ ժամը 10էն մինչև 6 ըստ Եւրոպացւոյ :

ԶԱՒԱՆ ԵՒ ՓԱՌՆԱԿ Ս.

Հայրենասիրական ոտանաւոր գեղեցիկ եւ բարոյական կրկին վիպասանութիւնք եւ, զորս արժանապատիւ ծերունին Գաբրիէլ Պատկանեան շարագրեալ է ի մաքուր աշխարհիկ բարբառ, այսինքն գրաբառի ոտնոյն եւ կանոնաց հաճապն, որ ամենեւին չմանցիր Կ. Պոլսոյ հայերէն աշխարհիկ լեզուին :

Յիշեալ կրկին վիպասանութիւնք՝ բովանդակեալ ի մի հատոր ուրժալ, բաղկացեալ է ի 163 երեսաց, եւ ի լոյս ընծայեալ ի տպարանի եղբարց Տեառեան ի Զմիւռնա, ուր կը վաճառի ի գին 1 1/2 Ֆրանքի :

ՔԱՆԱՔԱՆ ԵՒ ԲԵՐ

Զմիւռնիա, 9 Յուլիս :

Քաղաքի մասնական ժողովարանաց կողմանէ յատուկ պատգամաւորութիւն մի յանցելում շարժութեւ մեր վսեմաւ Վալինն ներկայանալով, յանձնեց նմա զգումայն զոր մասն եղբարք ժողոված էին մէջերն ի պէտս վերաւորեալ զինուորաց ներկայ պատկազմին : Յիշեալ գումարն հինգ հազար զուրուշ է, զոր նոյն վսեմութիւնն մեծ շնորհակալութեամբ ընդունելով՝

խոստացաւ ծանուցանել կայսերական կառավարութեան զմարդասիրական նուէրն մասնական ժողովարանաց Զմիւռնոյ :

— Ամերիկայի Միացեալ—Նահանգաց գետպան ի Կ. Պոլսոյ վսեմ միտար Մէյնէրա՝ յանցելում շարժութեւ հասաւ ի քաղաք «Վանտալիս» առնուն գործելով նոյն հասարակապետութեան, և զինի մի քանի օր մնալոյ աստ և մեր վսեմաւ կուսակալին հետ տեսութիւն ընելէ ետեւ, վերադարձաւ ի Կ. Պոլսոյ :

— Ըստ օսմանեան լրագրաց Կ. Պոլսոյ, Հայ կամաւոր զինուորաց թիւն՝ որ կայսերական զօրարանակին ծառայութեան մէջ կը գտնուի, 2600 ի կարնոյ և ի շրջակայից նորա,

200 ի խարբերէ,

500 յԱտանայէ և ի Մարաշէ,

100 ի վիլայէթէն Այաթնի :

Բայ յայսմանէ, ի զանազան տեղիս Ասիոյ պատերազմի միջեր և սննդեան պաշարներ փոխադրող Հայոց թիւն՝ ըստ վերոյիշեալ թերթից, երեսուն հազար հոգիի չափ է :

— Ենթի Ենթիլիկատէ մեծաշուք Ահմէտ էֆ. որ իբրեւ երեսփոխան Զմիւռնոյ՝ խղճի մտօք իւր պարտքը կատարեց Կ. Պոլսոյ երեսփոխանական ընդհանուր ժողովոյն մէջ, ուր երեւելի հանգիստացաւ իւր հայրենասիրական ճարտասան ատենախօսութիւններով, Ենթի Ենթիլիկատէ Ահմէտ էֆէնտին, կըսեմք, անցեալ շարժութ օրն վերադարձաւ ի քաղաքս և սիրալիր մեծարանօք ընդունուեցաւ ի քաղաքակցաց իւրոց :

— Հաճութեամբ սրտի կրեմք յաղգային լրագրաց Կ. Պոլսոյ թէ մեր քաղաքակց մեծարդոյ պարոն Պաղիկ Պապոյեան՝ որ յամաց հետէ ի Կ. Պոլսոյ կը բնակի, Զմիւռնոյ երեսփոխան ընտրեալ է յաղգային ընդհանուր ժողովոյ քաղաքիս, և այս ընտրութիւնն վաւերացեալ է յանդամոց կեդրոնական աղգային ժողովոյն :

Մեծաւ պարոն Պաղիկ Պապոյեան աղգաւոր, խոհական և բանիբուն անձն մի է, որ կրնայ օգտակար ծառայութիւններ մատուցանել թէ իւր քաղաքակցաց և թէ ընդհանուր աղգին :

— Կըսեմք թէ ի պաշտօնէ ծանուցուեր է փանոսեան էֆէնտի, թէ ՄԱՆՉՈՒՄԷ միայն վսեմ երկուց ամսոց դադարեալ է :

— Կայսերական հրովարտակաւ 36 հազար հոգի կու գուն ի դաւառէ մերմէ ի պաշտպանութիւն հայրենեաց : Այս թիւն յաւելցնելով ի վերայ թուոյն կամաւոր զինուորաց և պահեստի զօրաց՝ արդէն մեկնելոց ի տեսարանն պատերազմին, ընդամենայն 120,000 հոգի կը լինի մեր վիլայէթէն յուղարկեալ զինուորաց թիւը :

— Ի Բէզէրպուլէ ի 14էն Յունիսի առմեղ զրեալ նամակէ մի գնեալեալ տողսն քաղեմք : «Եղանակք աստ մինչև ցայժմ դառնաշունչ են, մրկալից և անձրեային : Ամսոյս 7, 8 և 9ին տեղաց կարկուտ յոյժ, և ջերմութիւն եղանակին էր յայնոսիկ առուս՝ ըստ ջերմաչափին Ռէոմուրի՝ 3 աստիճան» :

— Իսկ ի քաղաքիս աստ, ուր սովորական տապն սկսաւ յանցեալ շաբաթէ հետէ, Ռէոմուրի ջերմաչափն 29 աստիճան կնշանակէ զրոյի վերայ, կամ սանթիկրատ 36 աստիճան : Ի պատճառս այս սաստիկ ջերմութեան խուռն բաղմութիւն արանց և կանանց ամեն օր ծովու բաղանիք կերթան՝ վսեմ զովանալոյ :

— Ի Կ. Պոլսոյ հասեալ հեռագիր մի կը ծանուցանէ թէ կայսերական հրովարտակաւ վսեմաւ Արիֆի փաշան արտաքին գործոց նախարար կարգեցաւ փոխանակ Սաֆվէթ փաշային, որում հրապարակական շինուածոց նախարարութեան պաշտօնն յանձնեցաւ :

— Ըստ հեռագրական լրոյ միոյ ժամանելոյ ի Կարնոյ ընդ ամսաթուով 6—18 Յուլիսի, Ռուսք խեղդամահ արարին 22 գլխաւոր Քիւրոս, հրպատակս Ռուսիոյ տէրութեան :

— Կըսաւ աստեան թէ ի մէջ եղիպտական կառավարութեան և Ռուսքի ջրանցից ընկերութեան՝ դաշնադրական համաձայնութիւն մի եղեալ է, որով այս վերջինն պիտի կառուցանէ խեղդովն ծախելքն, զերկուս ամրոյս, որք պաշտպանեցեն զերկուս մուտս ջրանցիցն :

Բամպակին գիներն սակաւ ինչ բարձրացան և ի շաբաթուս գրեթէ 450 հակ վաճառեցան 350—360 զուրուշով առ կենդինարն :

Աֆիօնին գիներն ևս սակաւ ինչ բարձրացան և հաստատուն են ի պատճառս մի քանի գլխաւոր գնողաց վսեմ Ամերիկայի : Յանցելում և յայսմ շաբաթու ընդ ամենայն իբր 200 կողով աֆիօն վաճառեցաւ սկսեալ 130էն մինչև 133 զուրուշ առ չէքին : Ի շուկայի մերում առայժմ գրեթէ 1100 կողով պատրաստ աֆիօն գտանի :

Փալամուսը դիւրավաճառ է միշտ : Անգղիոյ տեսակին այսօրուան արժէքն 140 զուրուշ է և այս գնով 700 կենդինար վաճառեցաւ : Նմանապէս 1000 կենդինար չբանուած փալամուս գնեցաւ 70—75 ի առ կենդինարն :

Քէօքպոյայէն 250 քուրձ վաճառեցաւ ի գին 85—90 զուրուշից առ կենդինարն :

Ճէհրին և ոչխարի բուրդն յանգործութեան դասին :

ԾԱՆՈԹՈՒՄ

Բունթարի թաղը եղած ծովու բաղանիքն ներկայ Բունիս ամսոյն 1էն հասարակութեան տրամադրութեանց ներքէ է : Զուրը մտնելու զող պարոնայք և տիկնայք հարկաւոր եղած ամեն բաներն պատրաստ պիտի գտնեն այս հաստատութեան մէջ : Ուր սփածանելիք (փէշալիմալ, քօսթիլմալ) ևս կը գտնուին փսն տարանց և վսեմ տիկնայց թէ վարձքով և թէ գնոյ առնելու համար : Գաղտանց աշակերտաց խումբերն և ի բաղմութիւ անդամոց բաղկացեալ ընտանիքն աժան գնովք կընդունուին :

Թրամվուէի կառաց երթեկութեան գինքն : Ի շտեմարանաց մաքսատան մինչև ի կայարանն երկաթուղոյն Այաթնի 2
Ի նոյն շտեմարանաց ի բաղանիս Բուն. 1 1/2
Ի Նոյն շտեմարանաց ի Պէլլա—Վիլիս 1
Ի սրճարանէն Լուքայի ի բաղանիս 1
Ի հիւպատոսարանէն Գաղղիոյ 3/4
Ի սրճարանէն Լուքայի ի կայարանն 1 1/2
Յիշեալ կառքն քիչ մը պիտի կենան ի սրճարան, Լուքայի, ի նաւամատոյցն հիւպատոսարանին Գաղղիոյ և ի Պէլլա—Վիլիս՝ ճանապարհորդներ առնելու և դուրս հանելու համար :

Թրամվուէի կառաց երթեկութեան ժամքն պիտի համապատասխանեն Այաթնի երկաթուղոյն երթեկութեան ժամոց : Վերադարձին գինքն՝ նոյնն են ընդ դնոց երթալուն :

Թրամվուէի կառաց երթեկութեան ժամքն : Ի շտեմարանաց մաքսատան կըմեկնին առաւօտեան ժամը 5, 6, 7, 8, 9, 10, 12 1/2ին ըստ Ֆրանկաց և կէսօրէն ետեւ ժամը 2 30, 3 30, 4 30, 5 30, 6 30, և 7 30ին :

Կըվերագառնան առաւօտեան ժամը 5 30, 6 30, 7 30, 8 30, 9 30, 10 30, և 11 30ին և կէսօրէն ետեւ 1, 3, 4, 5, 6, 7 և 8ին, ըստ Ֆրանկաց :

ԾՈՒՈՒ ԲԱՆԱԿ

Քիւր Վասիլ Քիտօֆօրույօն կը ծանուցանէ յարող հասարակութեան քէ այս տարի ես ծովու բաղանիք շինել տուած է (Բունթարի) երկաթուղոյն կայարանին մօտ կազին գործարանին յիմաց, ուր ջուրեք ամենալաւագին է : Քիւր Վ. Քիտօֆօրույօն կը խոստանայ կատարեալ մաքրութիւն եւ բարեկարգութիւն պահել իւր բաղանեաց մէջ եւ յօժարամիտ ծառայութիւն եւ յարգանք մատուցանել իւր յաճախորդաց : Գորս կաղաքէ նախամեծար համարիլ զբաղանիս իւր քան գայլս, մանաւանդ որ գինքն շատ աժան են :

ԱՐԻՆԱԼԻ ՄԱՐԻՆՈՒՅԻ

Տաշ կոմսուհոյն այս պատուական գործոյն թարգմանութեան երկրորդ և վերջին հատորն է, արարեալ ի յարգոյ խոսրով Ե. Պուռնուս սուղեանէ : Ի լոյս ընծայեցաւ ի տպարանի Տէտեան եղբարց ի Զմիւռնա, գին 2 ֆրանք :

Խմբագիր—տէր լրագրոյս, Վ. Լ. Գ. Պալլա—Վիլիս :

Ի ՏԳՍՐԱՆՈՒ ԱՐՇԱՒՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ